ԼԵԳԱԼ-ԱՈՒԴԻՏ ՍՊԸ

LEGAL-AUDIT LLC

Սարյան 10 / 10 Saryan str., հեռ. /tel.: (+374 10) 54 56 27, (+374 91) 23 29 54, E-mail: legal_audit@mail.ru

«11» մայիսի 2013 թ.

ք. Երևան
Yerevan c.

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» հիմնադրիներին

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» կից ներկայացված 2012թ տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Նշված ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատ ներկայացնելու համար պատասխանատվություն է կրում ընկերության տնօրինությունը: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանասական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը և աշխատանքների բնույթի նկարագիրը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոններ, աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են աուդիտորի դատողության վրա հիմնված ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» կողմից կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը և կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

«Լեգալ-Աուդիտ» ՍՊԸ տնօրեն և *աուդիտոր*

Ս.Եղիազարյան _____ L.S.

«ЛЕГАЛ-АУДИТ» ՍՊԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ LEGAL-AUDIT LIMITED LIABILITY COMPANY 01012402 РА ЕРЕВАН YEREVAN